ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ

2026

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ցուցանիշները
2026 թվականի առաջին կիսամյակում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն տեղեկատվական զեկույցը ներկայացնում է 2026 թվականի առաջին կիսամյակում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունները, իրականացված աշխատանքների արդյունքները, անձանց կողմից բարձրացված խնդիրները, դրանց լուծման նպատակով ձեռնարկված միջոցները և արձանագրված արդյունքները:

Զեկույցի նպատակն է ներկայացնել ոչ միայն ստացված դիմումների և բողոքների վիճակագրական պատկերը, այլև դրանց հիմքում ընկած մարդու իրավունքների խնդիրները, բացահայտել քաղաքացիներին առավել հաճախ հուզող հարցերը, ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանի արձագանքման գործիքակազմն ու իրականացված միջամտությունների արդյունավետությունը: Այդպիսով, զեկույցը հնարավորություն է տալիս գնահատելու մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր վիճակն ու զարգացման միտումները, արձանագրված մարտահրավերներն ու ձեռք բերված արդյունքները՝ ընդգծելով Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի դերը մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության և խթանման գործում:

2026 թվականի առաջին կիսամյակում էական աճ է գրանցվել Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ցուցանիշների տեսանկյունից:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էականորեն աճել են Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր դիմում-բողոքների, Պաշտպանի թեժ գծին ստացված հեռախոսազանգերի, ինչպես նաև դրական լուծում ստացած գործերի թվերը:

Հաշվետու ժամանակահատվածում Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գիծը ստացել և սպասարկել է 9754 հեռախոսազանգ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 3389-ով ավելի է: Աճի միտումն ակնհայտ է նաև ամսական վիճակագրությամբ. եթե 2025 թվականի ապրիլին Պաշտպանի թեժ գիծն ստացել էր 1092 հեռախոսազանգ, ապա 2026 թվականի ապրիլին՝ 1705: Նույն միտումը պահպանվել է նաև հունիսին. 2025 թվականի հունիսին ստացվել էր 1283 հեռախոսազանգ, իսկ 2026 թվականի հունիսին՝ 2183, ինչը գրեթե կրկնակի աճ է:

Ավելացել է նաև Պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր դիմում-բողոքների թիվը. եթե 2025 թվականի առաջին կիսամյակում ստացվել էր 10 279 դիմում-բողոք, ապա 2026 թվականի նույն ժամանակահատվածում դրանց թիվը հասել է 13 467-ի:

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանի կարծիքին է ներկայացվել 181 իրավական ակտի նախագիծ, որից 121-ի վերաբերյալ ներկայացվել է 273 նկատառում: Սահմանադրական դատարան ներկայացվել է 2 դիմում և 1 հատուկ կարծիք:

2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում զգալիորեն աճել է դրական լուծում ստացած բողոքների թիվը. եթե 2025 թվականի առաջին կիսամյակում դրական լուծում էր ստացել 665 բողոք, ապա 2026 թվականի նույն ժամանակահատվածում այդ ցուցանիշը հասել է 1047-ի, ինչը նախորդ տարվա համեմատ գրեթե կրկնակի աճ է:

Միաժամանակ, դրական լուծում ստացած գործերի զգալի աճը փաստում է, որ Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությունը շարունակում է նպաստել մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը և խախտված իրավունքների վերականգնմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը շարունակելու է հետևողականորեն իրականացնել իր սահմանադրական առաքելությունը՝ ապահովելով իր մանդատի շրջանակներում յուրաքանչյուր անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ցուցանիշները.

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքները հիմնականում վերաբերել են հետևյալ իրավունքներին.

Դիմում-բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անձինք 2026 թվականի առաջին կիսամյակում Մարդու իրավունքների պաշտպանին դիմել են հիմնականում հետևյալ հարցերով՝

2026 թվականի առաջին կիսամյակ

Իրավունքի ոլորտ	Դիմումների քանակ
Առողջության պահպանման իրավունք	594
Սոցիալական ապահովության իրավունք	445
Պատշաճ վարչարարության իրավունք	244
Երեխայի իրավունքներ	876
Աշխատանքային իրավունքներ	165
Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ	313
Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքներ	557
Կրթություն ստանալու իրավունք	76
Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունք	117

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կայացված որոշումների, գործողությունների/անգործության իրավաչափության,
- սոցիալական աջակցության ծրագրերի հասանելիության,
- առողջապահական ծառայությունների տրամադրման,
- վարչական ընթացակարգերի արդար և արդյունավետ իրականացման,
- երեխաների և խոցելի վիճակում գտնվող անձանց իրավունքների պաշտպանության,
- զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության,
- աշխատանքի և զբաղվածության ոլորտում իրավունքների ապահովման,
- իրավապահ և արդարադատության համակարգերում մարդու իրավունքների երաշխիքների պահպանման հարցերով:

Դիմում-բողոքների ուսումնասիրությունը և քննարկումը հնարավորություն են տվել բացահայտելու ոչ միայն անհատական խնդիրներ, այլև համակարգային բնույթի հարցեր: Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությամբ բազմաթիվ անհատական և համակարգային հարցեր ստացել են լուծումներ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում անձանց դիմում-բողոքների ստացման հիմնական եղանակները.

Մարդու իրավունքների պաշտպանն անձանց համար ապահովել է դիմելու լայն հնարավորություն ու հասանելիություն: Դա հնարավորություն է տվել անձանց արագ, անխոչընդոտ ու հնարավորին դյուրին կապ հաստատել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ և ստանալ պատշաճ արձագանք:

Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու հիմնական եղանակները

Թեժ գծի հեռախոսազանգերի միջոցով	9 754	(72.43%)
Էլեկտրոնային փոստով	1 147	(8.52%)
Անձամբ աշխատակազմ ներկայացված դիմումներ	764	(5.67%)
Առցանց էլեկտրոնային հարթակի միջոցով	725	(5.38%)
Քաղաքային հեռախոսով	462	(3.43%)
«Հայփոստ»-ի միջոցով	311	(2.31%)
Սուրհանդակային ծառայությամբ	259	(1.92%)
Viber և WhatsApp հավելվածներով	45	(0.33%)

Դիմում-բողոքների վարչատարածքային բաշխումը

Ընդհանուր ստացված **13,467** դիմում-բողոքների բաշխումն ըստ վարչատարածքային միավորների

Առանց հասցեի	Երևան քաղաք	ՀՀ 10 մարզեր
5 456 40.51%	**4 866** 36.15%	**3 145** 23.34%
Հասցե չպարունակող դիմումներ	Մայրաքաղաք Երևան	Մարզային ընդհանուր ծավալ

ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ (12 ՄԻԱՎՈՐ)

	Քանակ	Մասնաբաժին
1 Հասցե չպարունակող դիմումներ	5,456	40.51%
2 Երևան	4,866	36.15%
3 Արմավիրի մարզ	606	4.50%
4 Կոտայքի մարզ	476	3.53%
5 Շիրակի մարզ	415	3.08%
6 Արարատի մարզ	384	2.85%
7 Գեղարքունիքի մարզ	324	2.41%
8 Լոռու մարզ	319	2.37%
9 Սյունիքի մարզ	279	2.07%
10 Տավուշի մարզ	159	1.18%
11 Արագածոտնի մարզ	116	0.86%
12 Վայոց ձորի մարզ	67	0.50%

Բարձրացվող հիմնական հարցերը և Մարդու իրավունքների պաշտպանի արձագանքը

- **Առողջության պահպանման իրավունք**

Առողջության պահպանման իրավունքը շարունակում է մնալ անձանց կողմից առավել հաճախ բարձրաձայնվող հարցերից մեկը: 2026 թվականի առաջին կիսամյակում առողջության պահպանման իրավունքին վերաբերել է **594 դիմում-բողոք**:

Քաղաքացիների դիմումները հիմնականում վերաբերել են՝

Առանձնահատուկ ուշադրության են արժանացել համընդհանուր առողջապահական ապահովագրության ներդրման գործընթացի շրջանակում առաջացող հարցերը:

Ոլորտային բարձրաձայնվող հիմնական հարցերն են եղել՝

- առողջապահական ծառայությունների փաթեթների և դրանց կիրառման պայմանների վերաբերյալ բավարար իրազեկվածության բացակայությունը,
- բժշկական ծառայությունների հավասար հասանելիության ապահովման անհրաժեշտությունը,
- փոխհատուցվող ծառայությունների շրջանակի վերաբերյալ հստակ տեղեկատվության անհրաժեշտությունը,
- քաղաքացիների դիմում-բողոքների արդյունավետ քննարկման մեխանիզմների կատարելագործումը և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը նման դիմում-բողոքների շրջանակում իրականացրել է՝

- ներկայացված դեպքերի անհատական և մանրամասն ուսումնասիրություն,
- պետական իրավասու մարմիններից պարզաբանումների պահանջում,
- քաղաքացիների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջամտություններ,
- համակարգային և անհատական խնդիրների լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում:

ԱՐԴՅՈՒՆՔԸ.

Մարդու իրավունքների պաշտպանի միջամտության արդյունքում բազմաթիվ դեպքերում քաղաքացիներին տրամադրվել է անհրաժեշտ աջակցություն, վերանայվել են առանձին իրավիճակներ և ապահովվել է իրավունքների իրացման հնարավորությունը:

- **Սոցիալական ապահովության իրավունք**

Սոցիալական ապահովության ոլորտը շարունակում է մնալ անձանց դիմում-բողոքների հիմնական ուղղություններից մեկը: 2026 թվականի առաջին կիսամյակում սոցիալական ապահովության իրավունքին վերաբերել է **445 դիմում-բողոք**:

Քաղաքացիները հիմնականում բարձրացրել են՝

Մարդու իրավունքների պաշտպանի միջամտության արդյունքում բազմաթիվ դեպքերում պետական մարմինները վերանայել են նախկինում ընդունված որոշումները, տրամադրել են լրացուցիչ պարզաբանումներ կամ իրականացրել են անհրաժեշտ գործողություններ՝ քաղաքացիների իրավունքների իրացման ապահովման նպատակով:

- Պատշաճ վարչարարության իրավունք

2026 թվականի առաջին կիսամյակում պատշաճ վարչարարության իրավունքին վերաբերել է **244 գրավոր և բանավոր դիմում-բողոք**: ՄԻՊ-ն ուսումնասիրել է ներկայացված հարցերը՝ գնահատելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունները/անգործությունը մարդու իրավունքների պաշտպանության չափանիշների տեսանկյունից, և գործադրվել են ՄԻՊ-ի գործիքակազմերը խնդիրները հասցեավորելու և լուծումներ գտնելու նպատակով:

Քաղաքացիների հիմնական մտահոգությունները վերաբերել են՝

- **Երեխայի իրավունքների պաշտպանություն**

Երեխաների իրավունքների պաշտպանությունը շարունակում է մնալ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթ ուղղություններից մեկը: 2026 թվականի առաջին կիսամյակում երեխաների իրավունքներին վերաբերել է **876 դիմում-բողոք**:



ԱՐԴՅՈՒՆՔ.

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը նպաստել է երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների ամրապնդմանը և երեխայի լավագույն շահի սկզբունքի կիրառմանը տարբեր ոլորտներում:

- **Աշխատանքային իրավունքներ**

2026 թվականի առաջին կիսամյակում աշխատանքային իրավունքներին վերաբերել է **165 դիմում-բողոք**:

Հիմնական հարցերն են եղել՝



ԱՐԴՅՈՒՆՔ.

Աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած աշխատանքը շարունակել է նպաստել անձանց իրազեկվածության բարձրացմանը և աշխատանքային հարաբերություններում մարդու իրավունքների չափանիշների խթանմանը:

- Ոստիկանության, քրեակատարողական հիմնարկների, քննչական մարմինների գործողությունների/անգործության վերաբերյալ ստացված դիմում-բողոքներ.

Նշված ոլորտներում իրավունքների երաշխավորման հարցերը գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ ուշադրության ներքո:

Ոստիկանություն.

2026 թվականի առաջին կիսամյակում Ոստիկանության դեմ ստացվել է **606 գրավոր և բանավոր դիմում-բողոք:**

Հիմնական բարձրացված հարցերն են՝

- ոստիկանության գործողությունների իրավաչափություն, ներառյալ՝ ներխուժումը վերացնելուն ուղղված գործողությունների, վարչական վարույթների, ավտոմեքենաները հատուկ պահպանվող տարածք տեղափոխելու, ինչպես նաև «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտավորությունների շրջանակում իրականացվող գործառույթների վերաբերյալ հարցեր,
- քաղաքացիների դիմումների կապակցությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելու, ինչպես նաև հանցագործության մասին հաղորդումները չընդունելու, դրանք քննչական մարմին չփոխանցելու վերաբերյալ հարցեր,
- գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը երաշխավորելու վերաբերյալ հարցեր,
- անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման, ինչպես նաև քաղաքացիների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորման վերաբերյալ հարցեր,
- խաղաղ հավաքների ընթացքում Ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության վերաբերյալ հարցեր,
- անձանց ազատությունից զրկելու իրավաչափության՝ վարչական ձերբակալում, ձերբակալում, վերաբերյալ հարցեր,
- անձնական տվյալների պաշտպանության հարցեր,
- փաստաբանների մուտքի արգելքի վերաբերյալ հարցեր,
- հիմքերի բացակայության պայմաններում ՍԷԿՏ համակարգում սահմանափակումները վերացված չլինելու վերաբերյալ հարցեր,

- օտարերկրյա քաղաքացիներին հասկանալի լեզվով նյութերը չտրամադրելու վերաբերյալ հարցեր:

ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

2026 թվականի առաջին կիսամյակում ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության դեմ ստացվել է է **145 գրավոր և բանավոր դիմում-բողոք:**

Բողոքներն ու ահազանգերը հիմնականում վերաբերել են

- փախստականի/ժամանակավոր պաշտպանության ենթակա անձի կարգավիճակի հայցերի, դիմումների ընդունման և դրանց քննարկման ընթացքում առաջող խնդիրներին և կայացվող վարչական ակտերի իրավաչափությանը,
- քաղաքացիների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորման վերաբերյալ հարցերին,
- օտարերկրացիների համապատասխան լեզվով թարգմանչի մասնակցության կամ փաստաթղթերը հասանելի լեզվով տրամադրելու խնդրին,
- էլեկտրոնային հերթագրման, ինչպես նաև ՄՔԾ ստորաբաժանումներում հերթերի առկայության խնդրին,
- բնակչության պետական ռեգիստրում հաշվառման գործընթացի հետ կապված խնդիրներին:

Քրեակատարողական հիմնարկներ

2026 թվականի առաջին կիսամյակում ստացվել է **417 գրավոր և բանավոր դիմում-բողոք:**

Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությունը Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից է:

Հիմնական բարձրացված հարցերն են՝

- տեսակցությունների կազմակերպում,
- կարգապահական միջոցների կիրառում,
- իրավաբանական օգնության տրամադրման, փաստաբանի մուտքի արգելքի հետ կապված հարցեր,
- այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելու հետ կապված հարցեր,
- պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու հետ կապված խնդիրներ,
- այլ իրավունքների պաշտպանության խնդիրներ:

Քննչական մարմիններ

Քննչական մարմինների գործունեությանը վերաբերող **210 դիմում-բողոքները** հիմնականում առնչվել են քրեական վարույթների ընթացքում անձանց իրավունքների ապահովմանը:

Հիմնական բարձրացված հարցերն են՝

- նախաքննությունը ողջամիտ ժամկետում չիրականացնելու,
- գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը երաշխավորելու վերաբերյալ հարցեր,
- քաղաքացիների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորման վերաբերյալ հարցեր,
- անձանց նկատմամբ կիրառված հարկադրանքի միջոցների և սահմանափակումների կիրառման վերաբերյալ հարցեր,
- անմեղության կանխավարկածի վերաբերյալ հարցեր,
- փաստաբանների մուտքի արգելքի վերաբերյալ հարցեր,
- լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն չիրականացնելու վերաբերյալ հարցեր,
- հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չքննարկելու՝ հաղորդումն ընդունող մարմնի հայեցողական պրակտիկան,
- քրեական վարույթին ներգրավված անձանց պաշտպանության վերաբերյալ հարցեր

- քրեական վարույթի ընթացքում սեփականության իրավունքի սահմանափակմանն առնչվող խնդիրներ,
- քրեական վարույթի շրջանակում անձանց պատշաճ ծանուցմանն առնչվող գործնական խնդիրներ,
- քրեական վարույթի նյութերին ծանոթանալու հետ կապված խնդիրներ,
- քրեական վարութային գործողությունների ընթացքում վարույթի մասնավոր մասնակիցների իրավունքների պաշտպանությանը վերաբերող այլ խնդիրներ:

Ստացվել են նաև մի շարք այլ բողոքներ, ինչպես նշված պետական մարմինների, այնպես էլ Գլխավոր դատախազության, Արդարադատության նախարարության, Հակակոռուպցիոն կոմիտեի, Ազգային անվտանգության ծառայության և այլ իրավասու մարմինների գործունեությանն առնչվող խնդիրների կապակցությամբ, օրինակ՝ հետախուզվող քաղաքացիների հանձնման, դատապարտյալների փոխանցման, ինչպես նաև ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարած անձանց ձերբակալմանն ու կալանավորմանն առնչվող խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը՝

- ուսումնասիրել է ստացված բողոքներն ու ահազանգերը,
- պահանջել է պարզաբանումներ իրավասու մարմիններից,
- անհրաժեշտության դեպքում իրականացվել են արագ արձագանքման այցեր,
- արձանագրված խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ է ներկայացրել, կազմակերպել է համապատասխան քննարկումներ:

Հարկ է ընդգծել, որ մի շարք դեպքերում բողոքներով և ահազանգերով բարձրացված հարցերը Պաշտպանի ձեռնարկած միջոցների արդյունքում ստացել են դրական լուծում:

- **Արդար դատաքննության իրավունք**

2026 թվականի առաջին կիսամյակում արդար դատաքննության իրավունքին առնչվող հարցերով Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել է **117 գրավոր և բանավոր** դիմում-բողոք:

- **Տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների/անգործության վերաբերյալ դիմում բողոքներ**

2026 թվականի առաջին կիսամյակում տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների/անգործության վերաբերյալ ստացվել է **602 գրավոր և բանավոր դիմում-բողոք: Դրանցից 154-ը վերաբերել են Երևանի քաղաքապետարանին, 448-ը՝ մյուս համայնքներին:**

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված՝ նշված ոլորտում անձանց իրավունքներին առնչվող հարցերը հիմնականում վերաբերել են.

- բնակարանային և կոմունալ հարցերին,
- հողային և սեփականության վերաբերյալ հարցերին,
- համայնքային որոշումներին,
- վարչական ծառայությունների հասանելիությանը և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությունների արդյունքում բազմաթիվ դեպքերում անձանց տրամադրվել են պարզաբանումներ, վերանայվել են առանձին որոշումներ և ապահովվել է իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

- **Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ**

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը շարունակում է մնալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի առանցքային ուղղություններից մեկը:

2026 թվականի առաջին կիսամյակում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ ստացվել է **313 գրավոր և բանավոր բողոք:**

Անձանց դիմում-բողոքները վերաբերել են՝

- ֆունկցիոնալության գնահատման և դրա արդյունքում ընդունված որոշումների բողոքարկման մեխանիզմի վերանայմանը,
- բժշկական որակյալ ծառայությունների տրամադրման հասանելիությանը Երևանում և ՀՀ բոլոր մարզերում, ինչպես նաև անհրաժեշտ վերականգնողական, կրթական, մասնագիտական, սոցիալական ծառայությունների և միջոցառումների տրամադրման հասանելիությանը,
- աջակցող միջոցների տրամադրման հետ կապված խնդիրներին,
- մատչելիության ապահովմանը, ներառյալ ֆիզիկական միջավայրի, տեղեկատվության և հաղորդակցության, այդ թվում՝ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության ապահովման հետ կապված խնդիրներին,
- համընդհանուր ներառական կրթության ապահովմանը, այդ թվում՝ խելամիտ հարմարեցումների տրամադրման հետ կապված խնդիրներին, զբաղվածության իրավունքի ապահովմանը:

Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը պետք է հիմնված լինի ոչ միայն սոցիալական աջակցության

տրամադրման, այլև անկախ կյանքի, ինքնուրույնության և հավասար մասնակցության ապահովման սկզբունքների վրա:

- **Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքներ**

Նշված ժամանակահատվածում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների վերաբերյալ ստացվել է **557 գրավոր և բանավոր բողոք:**

Նշված ոլորտում իրավունքների պաշտպանությունն ու խթանումը շարունակում է մնալ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից մեկը:

Քաղաքացիների կողմից բարձրացված հիմնական հարցերը վերաբերել են՝

- զորակոչի շրջանակում անձանց իրավունքներին,
- բժշկական օգնությանն ու սպասարկմանը, ինչպես նաև փորձաքննությանը,
- բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների եզրակացությունների բողոքարկմանը,
- վարժական հավաքների ներգրավման գործընթացում անձանց իրավունքներին,
- զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովության հարցերին,
- զինված ուժերում մարդու իրավունքներին վերաբերելի այլ հարցերին:

- **Կրթություն ստանալու իրավունք**

2026 թվականի առաջին կիսամյակում կրթություն ստանալու իրավունքին վերաբերող ստացվել է **76 գրավոր և բանավոր դիմում-բողոք**, որոնք հիմնականում առնչվել են՝

- կրթության հասանելիությանը,
- ուսումնական հաստատություններում հավասար վերաբերմունքի ապահովմանը,
- ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպմանը,
- ներառական կրթության ապահովմանը և այլն:

Քաղաքացիները բարձրաձայնել են նաև այնպիսի հարցեր, որոնք կապված են եղել երեխաների համար անվտանգ և ապահով կրթական միջավայրի ձևավորման հետ: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հատուկ ուշադրություն է դարձվել երեխայի լավագույն շահի սկզբունքի պահպանմանը և կրթություն ստանալու իրավունքի իրացման հարցերում խտրականության բացառմանը: ՄԻՊ հաստատության միջամտությունները նպաստել են ոլորտում իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրների լուծմանը և կրթական միջավայրում մարդու իրավունքների չափանիշների ամրապնդմանը:

- **Հանրային ծառայությունների մատուցում**

2026 թվականի առաջին կիսամյակում հանրային ծառայության մատուցման վերաբերյալ ստացվել է **251 գրավոր և բանավոր դիմում-բողոք:**

Հանրային ծառայությունների հասանելիությունն ու որակը անմիջական ազդեցություն ունեն քաղաքացիների արժանապատիվ կյանքի ապահովման վրա:

Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիների դիմումները վերաբերել են՝

- ջրամատակարարման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման խնդիրներին,
- տրամադրվող ծառայությունների որակին,
- վճարումների և հաշվարկների վերաբերյալ հարցերին,
- ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից դիմումների պատշաճ քննարկմանը և այլն:

Այս ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը նպաստել է քաղաքացիների իրավունքների պաշտպանության մեխանիզմների կիրառմանը և ծառայություններ մատուցող կազմակերպությունների հաշվետվողականության բարձրացմանը:

Մշտադիտարկման և փաստահավաք աշխատանք

2026 թվականի առաջին կիսամյակում իրականացվել է **127 այց**:

Այցերը ներառել են՝

ԿԱՐԵՎՈՐ Է ԱՐՁԱՆԱԳՐԵԼ.

2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությամբ դրական լուծում է ստացել **1 047 դիմում-բողոք**: Բացի այդ, բազմաթիվ դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը անձանց աջակցել է՝ տրամադրելով իրավական խորհրդատվություններ ինչպես հեռախոսազանգերի միջոցով, այնպես էլ աշխատակազմում ընդունելությունների ընթացքում:

ԴՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ՕՐԻՆԱԿՆԵՐ (ՀԱԿԻՐՃ)

Դեպք 1. Սոցիալական իրավունքի վերականգնում

Քաղաքացին դիմել էր ՄԻՊ-ին՝ նշելով, որ չնայած իրավական հիմքերի առկայությանը՝ իրավասու մարմինը մերժել է իրեն տրամադրել սոցիալական աջակցություն:

ՄԻՊ հաստատությունը ուսումնասիրել է ներկայացված հանգամանքները, պահանջվել են անհրաժեշտ պարզաբանումներ իրավասու մարմնից:

Մարդու իրավունքների պաշտպանի միջամտության արդյունքում քաղաքացուն տրամադրվել է սոցիալական աջակցությունը:

Դեպք 2. Առողջապահական ծառայության հասանելիության ապահովում

Քաղաքացին ՄԻՊ-ին հասցեագրած բողոքով հայտնել է, որ բժշկական օգնություն ստանալու հարցում հանդիպել է խոչընդոտների:

Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ և իրավասու պետական մարմնի հետ համագործակցությամբ քաղաքացուն տրամադրվել է անհրաժեշտ բժշկական օգնությունն ու սպասարկումը:

Դրական լուծում ստացած դեպքերը, իրավունքների պաշտպանության ոլորտները բազմաթիվ են: Մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետության կարևոր պայմաններից է անձանց խնդիրներին ժամանակին արձագանքելը, ինչին Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ուշադրություն է դարձնում: Արագ արձագանքում պահանջող ահազանգերի զգալի մասը ստացվում է նաև ՄԻՊ թեժ գծի միջոցով:

2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՄԻՊ թեժ գծի միջոցով ստացված 9754 հեռախոսազանգը ցույց է տալիս, որ քաղաքացիների համար արագ կապի հնարավորությունը շարունակում է մնալ իրավունքների պաշտպանության կարևոր գործիք:

2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ 10 ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Քաղաքացիների՝ ՄԻՊ հաստատությանը դիմելու հնարավորությունների ապահովում

ՄԻՊ հաստատությունը շարունակել է ապահովել քաղաքացիների դիմում-բողոքների ընդունման բազմազան ուղիներ՝ ներառյալ թեժ գիծը, առցանց դիմումները, էլեկտրոնային հաղորդակցությունը և անձնական ընդունելությունը:

2. Ավելի քան 13000 դիմումի ուսումնասիրություն, քննարկում

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է **13 467 դիմում-բողոք**, որոնք վերաբերել են մարդու իրավունքներին վերաբերելի բազմաթիվ ոլորտների:

3. Իրավունքների վերականգնման կոնկրետ արդյունքներ

Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությունների արդյունքում արդեն իսկ դրական լուծում է ստացել **1 047 դիմում-բողոք**, ինչը նշանակում է, որ անձանց մի շարք իրավունքներ արդյունավետ պաշտպանվել են:

4. Խնդիրների բացահայտում ոչ միայն անհատական, այլ նաև համակարգային մակարդակում

Անձանց դիմում-բողոքների ուսումնասիրությունն ու քննարկումը հնարավորություն են տվել բացահայտելու այնպիսի խնդիրներ, որոնք պահանջում են պրակտիկայի և օրենսդրության վերանայում, իրավունքահեն մոտեցումներ, մեխանիզմների կատարելագործում:

5. Իրավունքների պաշտպանություն առողջապահության և սոցիալական ոլորտներում

Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում իրականացված աշխատանքը նպաստել է քաղաքացիների համար ծառայությունների հասանելիության խնդիրների բացահայտմանը և դրանց լուծմանն ուղղված քայլերի իրականացմանը:

6. Խոցելի վիճակում գտնվող անձանց իրավունքների պաշտպանություն

Շարունակվել են երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների, ազատությունից զրկված անձանց, աջակցության կարիք ունեցող այլ խմբերի իրավունքների պաշտպանության ուղղությամբ ակտիվ աշխատանքները:

7. Մշտադիտարկման և կանխարգելման աշխատանք

Իրականացվել է 127 այց, որը, ի թիվս այլնի, ներառել է ազատությունից զրկման վայրերի մշտադիտարկումը և փաստահավաք աշխատանքները:

8. Պետական մարմինների հաշվետվողականության բարձրացում

Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությունները շարունակել են նպաստել պետական մարմինների կողմից քաղաքացիների բարձրացրած հարցերին արձագանքող մոտեցման ակտիվացմանը, իրավունքներին պաշտպանության մեխանիզմների կատարելագործմանն ու քաղաքացիների հետ հաղորդակցության բարելավմանը:

9. Մարդու իրավունքների վրա հիմնված կառավարման խթանում

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը շարունակել է նպաստել մի շարք ոլորտներում իրավունքահեն այնպիսի մշակույթի ձևավորմանը, որտեղ մարդու իրավունքների պաշտպանությունը դիտարկվում է որպես ելակետային ցուցիչ:

10. Քաղաքացիների վստահության ամրապնդում

Քաղաքացիների դիմում-բողոքների այսպիսի մեծ քանակը և դրանց կապակցությամբ իրականացվող աշխատանքները վկայում են, որ ՄԻՊ ինստիտուտը շարունակում է մնալ

մարդու իրավունքների պաշտպանության առանցքային մեխանիզմներից մեկը: Մարդու իրավունքների պաշտպանը շարունակելու է իր պրոակտիվ գործունեությունը՝ ապահովելով անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ու խթանումը, հատուկ ուշադրություն դարձնելով նաև ՄԻՊ աշխատակազմի կարողությունների ու ՄԻՊ հաստատության կողմից օգտագործվող կառուցակարգերի կատարելագործմանը: